



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 26.12.2013թ. ԹԻՎ 33/6-Լ
ՈՐՈՇՄԱՄԲ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
«ԱՆՂԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Էմին Բեգլարյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Կարեն Մեծլումյանի, Կարեն Սարգսյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի՝ 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում (**այսուհետ՝ Կարգ**) լրացում կատարելու հարցը,

հաշվի առնելով Կարգում փաստաբանների առանձին խմբերի համար անդամավճարի արտոնություններ սահմանելու հնարավորություն նախատեսելու հանգամանքը,

դեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ և 15-րդ կետերի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Կարգը լրացնել նոր՝ **14.4-րդ կետով** հետևյալ բովանդակությամբ.
«Պալատի խորհուրդը կարող է առանձին որոշմամբ անդամավճարի արտոնություններ սահմանել փաստաբանների առանձին խմբերի համար՝ կապված փաստաբանի տարիքի, կարգավիճակի կամ այլ հատկանիշի հետ:»:

2. Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձանց (փաստաբանների) համար սահմանել անդամավճարի հետևյալ արտոնությունը՝

- յուրաքանչյուր կարգապահական գործ (վարույթ) նախապատրաստելու համար կարգապահական գործ նախապատրաստող փաստաբանն

20 ապրիլի 2021թ.

թիվ 6/18-Լ

ազատվում է 1 (մեկ) ամսվա անդամավճար վճարելու պարտականությունից:

3. Սահմանել, որ սույն որոշմամբ նախատեսված արտոնությունը գործում է 2021 թվականի ապրիլի 1-ից հետո հանձնված կարգապահական գործերի համար:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կարգապահական գործ նախապատրաստող անձանց:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Ջոհրաբյան

**20 ապրիլի 2021թ.
թիվ 6/18-L
ք. Երևան**